ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

<<10>> ապրիլի 2017թ. N 39

ք.Ստեփանակերտ

2017 ԹՎԱԿԱՆԻ ԲԵՐՔԻ ՏԱԿ ՑԱՆՎԱԾ ՀԱՑԱՀԱՏԻԿԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՄԿՆԱՆՄԱՆ ԿՐԾՈՂՆԵՐԻՑ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԹՈՒՆԱՆՅՈՒԹԸ ԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԼՂՀ շրջաններում աշնանացան մշակաբույսերի ցանքատարածքներում մկնանման կրծողների դեմ պայքարի միջոցառումներ կազմակերպելու նպատակով՝ հիմք ընդունելով Լեռնայի Ղարաբաղի Հանրապետության Շահումյանի շրջանից ներկայացված հայտը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Մկնանման կրծողների դեմ պայքար իրականացնելու նպատակով <<Բույսերի պաշտպանության ծառայություն>> ՊՈԱԿ պահեստում առկա Բրոդիֆակում թունանյութից 10.0 լ տրամադրել Շահումյանի շրջանին:

2. <<Բույսերի պաշտպանության ծառայություն>> ՊՈԱԿ տնօրեն Վ. Խաչատրյանին՝

1) թունանյութը բաց թողնել վերը նշված չափաքանակով,

2) հսկողություն սահմանել իրականացվելիք պայքարի աշխատանքների նկատմամբ,

3) ընդունել հաշվետվություններ՝ կատարված աշխատանքների մասին և ներկայացնել նախարարություն:

3. ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության բաժնին՝ ապահովել սույն հրամանի դրույթների կատարումը:

Ա. ՄԽՈՅԱՆ